

Ինչպե՞ս է Աշխատում Կոնտակտների Հայտնաբերումը

Կոնտակտների հայտնաբերումը պարզ, գաղտնի գործընթաց է, որը տասնամյակներ շարունակ կիրառվում է հանրային առողջապահության վարչությունների կողմից՝ դանդաղեցնելու վարակիչ հիվանդությունների տարածումը և խուսափելու բռնկումներից: Դուք կարող եք ունենալ ձեր ներդրումը՝ պատասխանելով մի քանի պարզ հարցերի, երբ Հանրային Առողջապահությունը զանգահարի ձեզ:

Եթե ձեր COVID-19-ի թեստը դրական է

Եթե շփվել եք COVID-19-ով վարակված անձի հետ

Մնացեք տանը՝ բացառությամբ բուժօգնություն ստանալու դեպքում և հեռու մնացեք մյուսներից մինչև.

- Ձեր ախտանիշների առաջին անգամ ի հայտ գալուց հետո անցել է առնվազն 10 օր , և
- Առնվազն 24 ժամ ջերմություն չեք ունեցել, և
- Ձեր ախտանիշները բարելավվել են

- **Հանրային առողջապահության վարչությունը կգանգահարի ձեզ հետագա վերահսկման համար: Կարևոր է պատասխանել այդ զանգին:**



Հանրային Առողջապահությունը կհարցնի.

1. Այն վայրերի մասին, որտեղ դուք եղել եք
2. Այն մարդկանց մասին, որոնց շրջապատում գտնվել եք վարակված եղած ժամանակ:

- **Ձեր կողմից Հանրային Առողջապահությանը հայտնած մարդկանց հետ կապ կհաստատվի, սակայն չի նշվի ձեր անունը, կոնտակտային տեղեկություններ կամ այն, որ դուք վարակված եք COVID-19-ով: Նրանք տեղեկացվելու են, որ շփվել են COVID-19-ով վարակված անձի հետ, ինչպես նաև նրանց հանձնարարվելու է մնալ տանը՝ օգնելու մյուսներին չհիվանդանալ:**

Եթե ստանաք զանգ Հանրային Առողջապահությունից, այն ցուցադրվելու է ձեր հեռախոսին **LA PublicHealth** կամ **1-(833) 641-0305** հեռախոսահամարի տեսքով:

Դուք պետք է մնաք տանը և վերահսկեք ձեր առողջական վիճակը COVID-19-ով վարակված անձի հետ վերջին շփումից հետո 10 օր

- Հատկապես զգույշ եղեք 11-րդ օրվանից մինչև 14-րդ օրը և ձեռնարկեք նախազգուշական միջոցառումներ, անգամ երբ տանն եք, ինչպես օրինակ՝ դիմակ կրելը, մյուսներից 6 ոտնաչափ հեռավորություն պահպանելը և հաճախ ձեռքերը լվանալը:
- Եթե ամբողջովին պատվաստված եք և չունեք COVID-19-ի ախտանիշներ, ձեզ կհարցնեն չի պահանջվում կարանտին պահպանել: Դուք համարվում եք ամբողջովին պատվաստված 2 դեղաչափից բաղկացած պատվաստանյութի 2-րդ դեղաչափը ստանալուց 2 շաբաթ անց, կամ մեկ դեղաչափից բաղկացած պատվաստանյութը ստանալուց 2 շաբաթ անց: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք ph.lacounty.gov/covidquarantine կամ գրուցեք Հանրային Առողջապահության հետ:



- **Հանրային Առողջապահության վարչությունը կգանգահարի ձեզ հետագա վերահսկման համար: Կարևոր է պատասխանել այդ զանգին:**

Հանրային Առողջապահությունը կհարցնի.

1. Արդյո՞ք ունեք COVID-19-ի որևէ ախտանիշ կամ արդյո՞ք հանձնել եք թեստ:
2. Այն վայրերի մասին, որտեղ հնարավոր է՝ եղել եք:

- **Այլ անձի հետ սերտ շփումից խուսափելու համար խնդրում ենք տրամադրել լիարժեք և ճշգրիտ տեղեկություններ:**
- **Հանրային Առողջապահությունը կարող է զանգահարել ձեզ ավելի քան մեկ անգամ՝ ստուգելու ձեր առողջական վիճակը:**
- **Ձեր պատասխանների հիման վրա նրանք կտրամադրեն տեղեկություններ հաջորդ քայլերի մասին:**
- **Նրանք կկիսվեն-կտրամադրեն նաև աղբյուրների և ծառայությունների վերաբերյալ տեղեկություններ, ինչպես օրինակ՝ որտեղ հանձնել COVID-19-ի թեստ կամ ինչպես գտնել բժիշկ:**

